«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿԸ»՝ ՈՐՊԵՍ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՈՒՂԵԳԾԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Արմեն Պետրոսյան
Վ.Բրյուսովի անվան Երևանի լեզվահասարակագիտական համալսարան, արևելագետ, պ.գ.թ., ավագ դասախոս
armenpetrossian5@gmail.com

Արմինե Բադալյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրանտ
badalyanarmine53@gmail.com

Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևը[1] սկիզբ դրեց հակահայկական ավելի ագրեսիվ տրամադրությունների ձևավորմանն ադրբեջանական հասարակության ներսում, ինչը ևս իր հերթին հավելյալ լուրջ բարդություններ ստեղծեց արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում:

Ադրբեջանի նախագահի պաշտոնում Հ. Ալիևին փոխարինելուց հետո Իլհամ Ալիևը շատ արագ նոր որակ և շեշտադրումներ ներմուծեց հակահայկական քաղաքականության զինանոցում: Դեռևս նրա նախագահության սկզբնական շրջանում՝ օրակարգային խնդիր էր դարձել իշխանության ժառանգականության ապահովման հարցը: Այդ համատեքստում ԱՀ իշխող վերնախավի համար կարևորագույն խնդիր դարձավ ներքաղաքական և հասարակական համախմբման ապահովումը, արտաքին աշխարհի առջև «դեմքը պահելու», ավելի ժողովրդավար ու խաղաղասեր երևալու, հայերին որպես ագրեսոր ներկայացնելու խնդիրները, ինչն իր հերթին հանգեցրեց սահմանային լարվածության աճին և այլ ագրեսիվ դրսևորումների՝ հետագայում ներկայացվելով՝ որպես հայերի կողմից սահմանային միջադեպեր հրահրելու փորձեր:

Հակահայկականությունը դարձավ ԱՀ հասարակության համախմբման առանցքային գաղափարական լծակներից մեկը: Եթե ավելի բարձր մակարդակում Ի. Ալիևին հաջողվեց տարբեր միջոցներով հանդարտեցնել իշխանական թևերի տարակարծությունները, ապա հասարակական համախմբման տեսանկյունից անհրաժեշտ էին բոլորովին այլ լծակներ: Նման պարագայում Ադրբեջանի ղեկավարության համար ուղղակի թիրախ դարձան Արցախի Հանրապետությունն ու հայությունը՝ ներկայացվելով որպես «գոյատևման սպառնալիք», ինչը վերացնելու համար նրանց դեմ պատերազմի նախապատրաստումը ձեռք բերեց ռազմավարական կարևորություն: Վերադարձ կատարվեց խորհրդային ժամանակաշրջանի բունիաթովյան պատմագրությանը՝ հարցականի տակ դնելով հայոց պատմությունը, ինքնությունը և քաղաքակրթական դերակատարությունը[2]:

Արցախյան հարցի շահարկումը դարձավ հասարակական զանգվածների վրա տարաբնույթ ազդեցության հիմնական միջոցներից մեկը, որը շարունակվել և

---

[1] Ադրբեջանի նախագահի պաշտոնը զբաղեցրել է 1993-2003թթ., ավելի մանրամասն տե՛ս, Heydar Aliyev Biography: http://www.thefamouspeople.com/profiles/heydar-aliyev-5731.php , (26.06.2017):

[2] Տե՛ս 2005-ci İlham Əliyevin çıxışı Milli Elmlər Akademiyasında, http://www.regnum.ru/news/565316.htm. 23 December, 2005. (10.06.2017).

ավելի ծայրահեղ դրսևորումներ է ստացել Ի. Ալիևի[1] կառավարման հետագա տարիներին[2]: Հարկ է նշել, որ ավտորիտար վարչակարգերի պարագայում, որոնք լուրջ խնդիրներ ունեն ներքին լեգիտիմության առումով, առկա են մի շարք լծակներ, որոնց միջոցով իշխանությունները կարողանում են զսպել հասարակական-քաղաքական ընդվզումները: Այս տեսանկյունից կարելի է հատկապես առանձնացնել ԱՀ իշխանությունների տիրապետած հետևյալ լծակները՝

- Սոցիալ-տնտեսական (նավթագազային եկամուտների միջոցով),
- Գաղափարական (Արցախյան հիմնահարց և հակահայկականություն):

Առաջինի, ինչպես նաև երկրի ներսում տարաբնույթ հարթակներում ճնշումների մեխանիզմների կիրառման միջոցով Բաքվի ղեկավարությունը փորձում է լռեցնել հասարակությանը՝ այդ կերպ ձգտելով սահմանափակել վերջինիս՝ քաղաքական գործընթացներին ներգրավվելու հարցը: Սակայն, երբ վերոնշյալ տնտեսական լծակը իրացման լուրջ խոչընդոտների է հանդիպում ածխաջրածինների միջազգային շուկայում արձանագրվող առարկայական գնային ցնցումների դեպքում[3], նման պարագայում Ադրբեջանի իշխող վարչակարգն առավել հաճախակի է դիմում երկրորդ ռեսուրսին, որը հնարավորություն է տալիս մոբիլիզացնել, համախմբել սեփական հասարակությանը արտաքին վտանգի դեմ՝ սրելով իրավիճակը հակամարտ զորքերի շփման գծում, հանգեցնելով մարդկային մեծաթիվ զոհերի, այդ թվում՝ քաղաքացիական անձանց և նման կերպ շեղելով ուշադրությունը ներքաղաքական, սոցիալ-տնտեսական խնդիրներից: Հատկապես վերջին շրջանում Ադրբեջանի վերոնշյալ քաղաքականությանը զուգահեռ իրականացվում է տեղեկատվական, քարոզչական հարթակում՝ հայկական գործոնի վերաբերյալ տարաբնույթ եղանակներով ապատեղեկատվություն տարածելու, իրավիճակը սրելու բազմաթիվ այլ ուղեգծեր:

Քարոզչական պատերազմի կարևոր բաղադրիչներից էր նաև, այսպես կոչված, «Խաղաղության հարթակը»[4], որի հայ մասնակիցների մեծ մասը դրանում ներգրավվել է խաբեությամբ: «Երբ թշնամին հանկարծ բարեկամության ձեռք է մեկնում, նախ պետք է փնտրել նրա լարած թակարդը» հայտնի ժողովրդական իմաստությունը, թերևս, լավագույն բնորոշումն է ադրբեջանական հերթական ծրագրին, որը 2016թ. աշնանը գործի դրվեց նաև Բաքվում հայտնված մի քանի հայերի մասնակցությամբ: «Հայերի դեմ հայերի ձեռքով» գործողության նպատակն էր խաբեությամբ ու կեղծ խոստումներով հայտարարություններ կորզել Հայաստանում ու Սփյուռքում բնակվող հայտնի ու անհայտ հայերից՝ աղավաղելով նրանց արտահայտած մտքերը և համապատասխանեցնելով ադրբեջանական քարոզչության ոգուն՝ միջազգային հանրությանը ցույց տալու Հայաստանի և

---

[1] Իլհամ Ալիևն իշխանության է եկել 2003թ. հոկտեմբերի 9-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքում և կառավարում է Ադրբեջանը մինչ օրս, ավելի մանրամասն տե՛ս, Բաղալյան Ա., «Ադրբեջանի ընդդիմադիր կուսակցությունները նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ (2003-2016թթ.)», 21.հունիս.2017, (26.06.2017) http://www.diplomat.am/publ/crizis_diplo/1/96-1-0-1744 , (26.06.2017)

[2] Տե՛ս Հայրապետյան Տ., Ղարաբաղյան գործոնը Ադրբեջանի 1991-1994 թվականների ներքաղաքական զարգացումներում, էջ 21, https://regionalaffairs.files.wordpress.com/2013/10/ra1_pp-155-175-tatevik-hayrapetyan-karabakh.pdf , (10.06.2017):

[3] Տե՛ս, Խաչատրյան Ա., Նավթարդյունահանումը և տնտեսական իրավիճակն Ադրբեջանում. 2016 թվականի ամփոփում, 16 Մարտ, 2017, http://razm.info/98350 , (26.06.2017).

[4] Տե՛ս, "Ermənistan-Azərbaycan Sülh Platforması", 31 yanvar 2017, http://www.arm-azpeace.com/news.php?id=1108&lang=az, (26.06.2017).

Ադրբեջանի քաղաքացիական հասարակությունների միջև իբրև երկխոսության գործընթացի առկայությունը, ինչը, վաղ թե ուշ, հանգեցնելու էր տևական հաշտության ու խաղաղության[1]:

Ադրբեջանածին այս նախաձեռնությանը խաբեությամբ միացած հայերից ոչ ոք տեղյակ չի եղել, թե ինչի մասին է խոսքը [2]՝ կարդալով միայն տարածաշրջանային համերաշխության մասին կոչը, այնինչ իրական ծուղակը թաքցվել է: Այդ հայերից է Դավիթ Ալեքսանյանը, ում Բաքվից փորձել են ներառել նշված նախաձեռնության մեջ, սակայն թշնամու՝ ճաքեր տված քարոզչամեքենան նաև տեղեկատվական արտահոսք է ունեցել: Բաքվում բնակվող հայերի միջոցով նման առաջարկներ արվել են նաև կանադահայ մտավորական Ժանետ Հակոբյանին, առանց որի իմացության, նրանից վերցված հարցազրույցի պատասխանները օրեր անց հայտնվել են ադրբեջանական լրատվամիջոցներում[3]՝ հեղաշրջում անելու և Արցախը Ադրբեջանին հանձնելու մտացածին կոչերով: Գերմանիայում շատ լավ աշխատանքի հրավերի միջոցով փորձել են ծուղակը գցել նաև ուսուցչուհի Նարինե Դերմենջյանին, սակայն վերջինս հասկացել է, որ իր համար թակարդ է հյուսվել՝ պատահաբար տեսնելով իր անունը Սյուզան Ջաղինյանի ֆեյսբուքյան էջում, թե իբրև ինքը համաձայն է «Արցախը հանձնել Ադրբեջանին»[4]: Այսպես կոչված «Խաղաղության հարթակի» շարքերում նշված են այլ հայեր ևս, որոնք նույնպես խաբեության զոհ են[5]: Սյուզան Ջաղինյանը այն տխրահռչակ հայերից է, որը տարիներ առաջ հանցագործություն է կատարել Հայաստանում[6] և փախել Բաքու՝ դառնալով գործիք թշնամու ձեռքում՝ նույնիսկ ծաղիկ դնելով Խոջալուի զոհերի հուշաքարին և հայտարարելով դրանում հայկական կողմի մեղավորության մասին[7]:

Ադրբեջանական քարոզչամեքենան ձգտել է ընդլայնել հարթակի կազմը՝ ներգարվելով ազգությամբ հայ այլ անձանց և նպատակ ունենալով ներքին պառակտում առաջացնել հայ հանրության շրջանում: Իրենց ազդեցության տակ

---

[1] Ակնհայտ է, որ սա արվում էր հայ հասարակության ներսում երկպառակություն առաջացնելը, աշխարհին Ադրբեջանի «խաղաղասեր» լինելը ցույց տալու և հային՝ որպես ագրեսոր ներկայացնելու համար, ինչը սակայն արդյունք չտվեց:

[2] Այս մասին տեղեկացել ենք «Շանթ» ՀԸ-ի թղթակից, լրագրող, Diplomat.am-ի ղեկավար Նաիրի Հոխիկյանի հետ արված հարցազրույցից, ինչի համար հեղինակը իր շնորհակալությունն է հայտնում նրան:

[3] Մանրամասն տես, Мартиросян В., «Ребята пойдут с автоматами на Саргсяна», 7 Февраля 2017, https://haqqin.az/comics/92020, (26.06.2017).

[4] Մանրամասն տես, Джагинян С., «Карабах должен быть в составе Азербайджана», 11 Марта 2017, https://haqqin.az/news/94650 , (26.06.2017).

[5] Այն մասին, որ վերոնշյալ մարդիկ զոհ են, կրկին տեղեկացել ենք Նաիրի Հոխիկյանի հետ արված հարցազրույցից:

[6] Սյուզան Ջաղինյանը 2012 թվականի սեպտեմբերի 23-ին Հրազդանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության օրը Հրազդան քաղաքի իր բնակարանից, իր օգտագործած բջջային հեռախոսից հաղորդագրություն է ուղարկել «Ա-Թի-Վի» հեռուստաընկերության «Կիսաբաց լուսամուտներ» հեռուստածրագրի կոնտակտային հեռախոսահամարին՝ տալով նախապատրաստվող ահաբեկչության մասին սուտ հաղորդագրություն: Ավելի մանրամասն, տես, «Ով է Բաքու մեկնած «լրագրող» Սյուզան Ջաղինյանը. նա նախկինում դատապարտված է եղել», 11 նոյեմբեր 2016թ., *http://www.armtimes.com/hy/article/97106* , (26.06.2017).

[7] Տես, CBC.AZ, Ermənı hüquq müdafiəçiləri soyqırım qurbanlarını yad ediblər, https://www.youtube.com/watch?v=nTuWKeuTz5k, (26.06.2017).

հայտնված Վահան Մարտիրոսյանի[1], Սերգեյ Ջուլհակյանի[2] և Սյուզան Ջաղինյանի միջոցով կոչ անելով չգնալ Արցախ և չդիմադրել ադրբեջանցիներին[3]:

Առհասարակ պատմության ընթացքում կեղծ խաղաղության գաղափարների շահարկումը նոր գործելաոճ չէ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին հակամարտ ճամբարներն իրենց քարոզչական քաղաքականության մեջ կիրառել են այս մեթոդը՝ միմյանց զգոնությունը թուլացնելու համար: Մեր օրերում խաղաղության հարթակներից առավել հաճախ օգտվում են թուրքերը՝ հատկապես Իրանին ու քրդաբնակ թուրքերին մոլորեցնելու համար:

Ադրբեջանի «Խաղաղության հարթակը» արտաքուստ անվտանգ մի կառույց է, որի կանոնադրության երրորդ և չորրորդ կետերը[4], սակայն, բացում են դրա իրական նպատակը.

- Ազատել Հայաստանի կողմից «գրավված» յոթ շրջանները և հարկադիր տեղահանվածներին վերադարձնել իրենց բնակավայրեր,
- Որոշել Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը՝ որպես Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետություն Ադրբեջանի կազմում:

Հարկ է նշել, որ նույն 4-րդ կետը մասամբ կրկնում է 1921թ. հուլիսի 5-ին Ի. Ստալինի կողմից կայացրած որոշումը՝ Արցախը (Լեռնային Ղարաբաղ) թողնել Ադրբեջանի սահմաններում: Այն դառնալու էր ինքնավար մարզ՝ Շուշի կենտրոնով[5], որը պետք է ունենար լիիրավ ինքնուրույնություն, սակայն եղավ հակառակը. բռնակցման հետևանքով շուրջ 70 տարի անց հայ բնակչությունը ոչ միայն չաճեց, այլև նվազեց, իսկ դրա փոխարեն կտրուկ ավելացավ ադրբեջանցիների թիվը:

Ուշագրավ է նաև Ադրբեջանի պետական գործիչների և պետական հիմնարկների աշխատակիցների՝ հարթակին միանալու փաստը, ինչպես նաև այն, որ իշխանության ներկայացուցիչները տարբեր առիթներով հայտարարություններ են անում նախաձեռնության մասին, ինչը վկայում է, որ այն պետական ծրագիր է[6]: Պետք է նշել նաև, որ հարթակին բացի հայ և ադրբեջանցի անդամներից միացել են նաև ազգությամբ թուրք, Ստամբուլի համալսարանի պատմական գիտությունների դոկտոր Մեհմեդ Փերինչեքը, ուզբեկ պատմաբան Շուհրատ Սալամովը, վրաց պատմաբան Գուրիամ Մարխուլիան և այլ ազգերի գործիչներ, և նրանց պատկանող կազմակերպություններ, որոնք ակտիվորեն ֆինանսավորվում

---

[1] Տե՛ս, Abasov H., Vaan Martirosyanin metbuat konfransi, 18. September 2015, https://www.youtube.com/watch?v=8OJfignCgMU , (26.06.2017).

[2] Տե՛ս, Мартиросян В., 1.Сергей Джулакян едет в Баку: «Армяне бегут из Карабаха», 21 Января 2017, https://haqqin.az/news/90595 , 2. Сергей Джулакян: «В Шуше царит беспредел. Надо освободить Карабах от этих негодяев!», 22 Января 2017, https://haqqin.az/news/90662 ,3. Сергей Джулакян: «Армянам Карабах не нужен», 19 Февраля 2017, https://haqqin.az/news/93041 , 4. Касумова М., Сергей Джулакян о Карабахе:"Есть признанные международным сообществом границы", 25 января 2017, https://www.youtube.com/watch?v=sqgz0-Au5fM , (26.06.2017).

[3] Տե՛ս, Şıxaliyev Q., Ermənilər öz əsgərlərinə müraciət edir: "Qarabağdan qaçın", 6 Mart 2017, https://www.youtube.com/watch?v=TImkB08JeVY , (26.06.2017).

[4] Տե՛ս, Ermənistan və Azərbaycan Sülh Platforması, 27 yanvar 2017, http://arm-azpeace.com/news.php?id=1080&lang=az, (26.06.2017).

[5] Տե՛ս, ՀՀ ԱԳՆ, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, http://www.mfa.am/hy/artsakh-issue/ , (26.06.2017).

[6] Տե՛ս, Գրիգորյան Գ., Խաղաղություն թե քարոզչություն. ո՞րն է Ադրբեջանի «Խաղաղության հարթակի» ուղերձը, http://razm.info/103633 , (26.06.2017).

են Ադրբեջանի կողմից[1]: Հարթակի վրաց անդամն իր հակահայկական դիրքորոշմամբ հանդես էր եկել դեռևս 2011թ.՝ իր հարցազրույցներից մեկում նշելով՝ «Հայերը շարունակում են իրենց տարածքների ընդլայնման քաղաքականությունը, որը ուղղված է Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի դեմ: Այս քաղաքականությունը ենթադրում է դաշնակիցների որոնում իրենց պետության տարածքների ընդլայնման համար, քանի որ հայ ժողովուրդը չի կարող դա անել առանց օգնության»[2]: Ինչ վերաբերում է հարթակին աջակցություն հայտնած հայ մասնակիցներին, ապա դրանց մի մասի անունները ոչ մի բան չեն ասում հայ ընթերցողի լայն շրջանակներին (օրինակ՝ Բաքվում ծնված, Ուկրաինայում բնակվող Արթուր Աղաջանովը և իր հայրենակից Էրիկ Խաչատուրովը, որն այժմ բնակվում է Սանկտ Պետերբուրգում, ռուսաստանաբնակ Էդուարդ Վարդանովը և այլն) կամ էլ ընդհակառակը՝ օդիոզ կերպարների համբավ ունեցող մարդիկ են (օր.՝ որպես վտարանդի հայ գրող ներկայացող Վահե Ավետյանը, ինչն իրեն չի խանգարում ժամանակ առ ժամանակ այցելել Հայաստան):

Որոշ դեպքերում էլ, ինչպես արդեն նշել ենք, «խաղաղասերների գլխաքանակ» ապահովելու համար հայտարարվել է իրականում գոյություն չունեցող մարդկանց միանալու մասին: Օրինակ՝ երիտասարդ մի ուկրաինացու ներկայացրել են որպես «Արամ Կարապետյան», իսկ ադրբեջանցի Ալյոնա Աբդուլլաևային՝ որպես «Անահիտ Սինանյան»: Չի բացառվում, որ ԽՀ-ում կան և այլ հնարած կերպարներ, այդ թվում օտարերկրացիների և ադրբեջանցիների թվում[3]:

Ամփոփելով պետք է նշել, որ «Խաղաղության հարթակը»՝ ձևավորվելով իբրև երկու ոչ բարեկամական երկրների քաղաքացիական հասարակությունների նախաձեռնություն, որի հռչակված նպատակն էր Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հասնելու գործընթացին նպաստելը, այնուամենայնիվ իր հիմքում ուներ տրամագծորեն հակառակ միտումներ պարունակող բովանդակություն: Որպես նախագիծի ստվերային հեղինակ՝ ԱՀ իշխանությունները որևէ կերպ չեն փոխել իրենց դիրքորոշումն արցախյան հիմնախնդրի կարգավորման հարցում՝ դրա իրականացման ճանապարհին փորձելով նաև երկպառակություն առաջացնել հայկական կողմում՝ այդ նպատակին հասնելու համար դարձյալ դիմելով պաշտոնական Բաքվի հակահայկական քարոզչական զինանոցի ամենատարածված միջոցներին՝ կեղծիքների ու սադրանքի քաղաքականությանն՝ այս անգամ նոր բովանդակային հարթակում, որի արդյունավետությունը, սակայն, հերթական անգամ որևէ կերպ չարդարացրեց դրանում ներդրված միջոցները:

---

[1] Տե՛ս, “Платформа Мира между Арменией и Азербайджаном”, http://www.arm-azpeace.com/index.php?lang=ru , (26.06.2017).

[2] Տես, Georgian expert: Betrayal by Armenians is historic chain of events aiming at expanding their territories, 22 April 2011, https://en.trend.az/azerbaijan/politics/1865330.html., (26.06.2017).

[3] Տես, Գրիգորյան Գ., նշվ աշխ.:

Արմեն Պետրոսյան, Արմինե Բադալյան

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿԸ»՝ ՈՐՊԵՍ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՈՒՂԵԳԾԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Բանալի բառեր՝ *«Խաղաղության հարթակ», քարոզչական պատերազմ, Ադրբեջան, արցախյան հակամարտություն, հայատյացություն, ներքաղաքական զարգացումներ*

Հոդվածի հեղինակները քննարկում են Ադրբեջանի հակահայկական քարոզչական ուղեգծի կարևոր բաղադրիչներից մեկի՝ «Խաղաղության հարթակի» էությունը, որի գործունեությունը վերջին ամիսներին մտել է փակուղի: Այն, հանդիսանալով Ադրբեջանի ապատեղեկատվական պայքարի քարոզչության շարունակությունը, ունի հստակ նպատակ՝ տիրել Արցախին՝ հայերի մեջ երկպառակություն մտցնելու, դրա ճանապարհին կեղծիք ու սադրանք կիրառելու ճանապարհով, ինչը նորություն չէ Ադրբեջանի իշխանությունների համար: Սակայն հերթական հակահայկական մոտիվներով համեմված ծրագիրը որևէ կերպ չարդարացրեց դրանում ներդրված միջոցները՝ ցույց տալով, որ այն որևէ աղերս չունի խաղաղության հետ:

Армен Петросян, Армине Бадалян

«ПЛАТФОРМА МИРА МЕЖДУ АРМЕНИЕЙ И АЗЕРБАЙДЖАНОМ» КАК ВАЖНЫЙ ФАКТОР АНТИАРМЯНСКОЙ ДЕЗИНФОРМАЦИОННОЙ ПОЛИТИКИ АЗЕРБАЙДЖАНА

Ключевые слова: *«Платформа Мира», пропагандистская война, Азербайджан, арцахский конфликт, армянофобия, внутреполитические развития*

Авторы статьи анализируют деятельность одного из важнейших факторов антиармянской пропаганды Азербайджана - «Платформы мира». В последние месяцы деятельность последнего зашло в тупик. Главной целью данной платформы является разделение армян на два лагеря. Кроме того они хотят показать всему миру свою миролюбивую политику. Однако очередная платформа антиармянской пропаганды никак не оправдала вложенные в неё средства, вместе с этим показав, что она никаких отношений не имеет с проблемой соблюдения мирных переговоров.

Armen Petrosyan, Armine Badalyan

«PEACE PLATFORM BETWEEN ARMENIA AND AZERBAIJAN» AS AN IMPORTANT FACTOR OF THE ANTI-ARMENIAN MISINFORMATION STRUGGLE OF AZERBAIJAN

Key words: *«Peace Platform», propaganda war, Azerbaijan, Artsakh conflict, Armenophobia, internal political development*

The authors of the article analyze the activity of one of the most important factors of the anti-Armenian propaganda of Azerbaijan, the «Platform for Peace». In recent months, the latter's activities have reached a dead end. The main goal of this platform is the division of Armenians into two camps. In addition, they want to show the whole world their peace-loving policies. However, the next platform of anti-Armenian propaganda did not justify the funds invested in it, at the same time showing that it has no relationship with the problem of observing the peace talks.